

բայց իր գործերուն մէջ անոր ուղղուեցաւ. վերթէր, Գառնատ կէօթէի կեանքը կը ներկայացնեն այնպէս՝ ինչպէս պէտք էր ըլլար:

Կէօթէ քսանհինգ տարեկան էր: Թէեւ արտաքին շքեղ և փայլուն կեանքով մը շրջապատուած, սակայն սրտին խորը կը զգար կեանքին դառնութիւնն և արհաւիրաց տուայտանքը գոյութեան: Իր լուսթեան և առանձնութեան ժամերուն Գե. Բըսթրի հեգնող և որոտացող ձայնը, Օստիանի մռնչող վայրագ դիցազնեղը, Վոլքէրի սկեպտիկ ու դաժան ծաղրը աւելի սաստկացուցած էին այդ պարապուծութիւնն և տառապանքն իր սրտին, այնպէս որ գերման ժողովրդական երգերու լուսափայլ և զուարթացունչ գեղն անգամ չէր կրցած ամոքել այդ դառնութիւնը: Ամէն ինչ կ'եռար ու կը խմորուէր իր հոգեւոյն մէջ որ միւս կողմէ կը ձկտէր գաղափարական զմայլելի տեսիլներու, անուրջներու և յոյսերու. արտաքին կեանքն ալ կ'ընծայէր ուրախութիւնը սիրոյ և ապրելու՝ և սակայն միայն երեւութապէս, խաբկանք և պատրանք իբր միակ ճշմարիտ իրականութիւն կը յայտնուէին. ամէն ինչ կ'ընդդիմանար իր բնածին փափագներուն և ձկտումներուն: Այս խռովակոծ շրջանին արդիւնք է վերթէրը, պատմութիւնը հիւանդ սրտի մը՝ որ ներքին տագնապներէ ու անձկութիւններէ կը հեռացնէ ունայնութիւնը գոյութեան, և այդ սեւ տխրութեան մէջ միակ իրակաւ նութիւն և սփոփիչ զուարթութիւն սէրն է որ կը ժպտի իրեն, այն ալ գոթախաբար անիրականալի, ուսկից կը զգայ հարկը խուսելու կեանքէն: Ամէն ինչ ճշմարիտ է վերթէրի մէջ ու միանգամայն ամէն ինչ զարմանահրաշ. ճշմարիտ՝ ցաւը որ հոգէն կ'ելլէ ու կը սողոսկի ամէն մահացունքու սրտին մէջ. զարմանահրաշ՝ լոյսը որ վերէն կ'իյնայ ու կ'ողողէ բնութիւնն և իրերը և աչքերը, ու կը թրջութեանցն սէրը. ասկից կ'ընանք նաեւ նուկատեւ վերթէրը սիրոյ երգ մը: Վերթէր կը զգայ թէ այն աստն ինքզինք կը սիրէ,

երբ սիրուած է, կ'ատէ ինքզինք՝ երբ թողլըուած է. իր մահը արդիւնք է սիրոյ իրականութեանը մշտատեւ ապրելու անկարելիութեան. սէրը պիտի փրկէր զինք:

Կէօթէ իր կեանքէն անցաւ քերթողութեան. արդէն բանաստեղծութիւնը պէտք է կեանքի զէպքերէն ծագի և իրական ապրում մ'ըլլայ հոգեկան ապրում ըլլալէ առաջ. քերթուածը իր կարգին պիտի լրացնէ կեանքն ու ամբողջացնէ անոր իմաստը՝ տեսիլքի մը անգայտութիւնն ընծայելով նիւթին և իրականութեան. փոխադարձաբար կեանքն ալ պիտի տայ քերթուածին բաբախում, աւելն և սրտի հրայրը: Կէօթէ նախ կեանքէն սկսաւ. ամէնէն առաջ ապրող մ'եղաւ, կատարեալ և անյագ ապրող մը, սակայն հեթանոսի աչքերով նայելով կեանքին. նայեցաւ ու երգեց կեանքն ամբողջ ինչպէս որ է անկիր և անայլայլ կերպով, առանց ապրելու իր ստեղծած անձերուն ցաւն և տուայտանքը, առանց հաղորդակից ըլլալու անոնց զգացումներուն. ողբերգական և յուզողը պէտք են մերժուիլ իր ըմբռնած կեանքէն, նոյնպէս ինչ որ հոգեկան յուզում կ'ընայ առաջ բերել. ասիկա շատ լաւ կը բացատրէ իր քերթողի նկարագրի՝ քիչ մը պաղ և արտակարգ երեւոյթը. հետեւաբար եղաւ յստակ, թափանցող և առարկայական հայեցող մը քերթողութեան մէջ ալ, ինչպէս էր բնութեան նկատողութեան մէջ:


Իր ինքնակենսագրութեան էջերուն մէջ կը յայտնէ մեզի Կէօթէ թէ ինչպէս պիտի կատարէր իր դաստիարակութիւնը՝ եթէ մանկութեան տարիներուն ճակատագրի իրեն յանձնուած ըլլար. իր այդ մտադրածը կը կատարէ յետոյ երիտասարդութեան շրջանին: Խուզարկող և քննող՝ կը մերձենայ գիտելիքի ամէն մասնածիւղերուն ու կը մխրձի իրերու գաղտնիքներու մէջ. կը փորձարկէ և կը վերլուծէ, կը հաւաքէ ու կը կարգաւորէ. կը բանայ իր իմացականութիւնն և միտքը յանհուն ըմբռնելու ամէն ինչ, ամէն նիւթ. տիեզերքն ամբողջ իր մտքին և հոգեւոյն ա-

ռարկան կ'ըլլայ՝ զգալու և հասկնալու, հմտանալու և օրօրուելու. իրապէս զինքը տիեղրական մը կը նկատեն շատեր. Կէօթէ տիեղրական մը չէ, իրաց հետ ապրող մըն է. ու եթէ ամէնուն մէջ չի կրնար խոր թափանցել, սակայն ընդհանուրին հոգին կ'ընդգրկէ ու անով կ'ապրի. յայտնի է այդ հոգին իրեն զգալի ունէ հաղորդակցութիւն պիտի չընծայէ. և ինք որ վարժած էր զգալիով միմիայն յափրանալ, տիեզերական գիտութեան և հոգիին մէջ չի գտներ հանգիստ և անդորրութիւն. միւս կողմէ կը զգայ երջանկութեան մը հարկը իր մտքին համար, որով կը դիմէ արուեստին, բանաստեղծութեան. արուեստը միայն պիտի կարենայ խաղաղել և ամոքել իր անհանգարտ էութիւնը և քերթողութեան մէջ Կէօթէ ոչ թէ պիտի կորսնցնէ իր մտածողի և հայեցողի մեծութիւնը՝ այլ պիտի վերագտնէ:

Մարդկային միտքը իր կատարելութիւնը կը գտնէ մտադրած նպատակին իրականացումը ձեռք բերած ատեն, և ոչ թէ թողլով զայն առկա ու անհաս վիճակի մէջ: Կէօթէ չունեցաւ ամբարտաւան ետ ընկրկումը իր մտքին զիտած նպատակը անմատչելի նկատելով, ու ինքզինք պարտերելով անիմանալի բանաձեւի մը մէջ՝ որ իր իմացականութեան ընդարձակ բայց մարդու աչքերուն անտես հորիզոն մը պիտի ընծայէր: Բնութիւնը՝ ինչպէս եղած էր նպատակը իր կեանքին, եղաւ նաեւ զինքն ազատագրող իմաստասիրական մտքի կապերէն. եղաւ նաեւ իր մէջ ծնուցիչը արուեստին: Իրապէս արուեստագետի խառնուածք,

բանաստեղծի հոգի, բնութեան ազդեցութեան ներքեւ բարեխառնեց իր բոլոր կարողութիւնները տեսակ մը մեղմ և ժուժկալ չափաւորութեամբ ու իմացական լոյսի մը շառայով, և ընծայեց իր գաղափարականին՝ թէեւ խորհրդաւոր ու քողածածուկ, բայց որոշ և յստակատես իրականացում մը: Կէօթէի համար լոյսը հարկաւոր էր և ոչ խաւարի թէեւ հմայիչ անորոշութիւնը:

Պատուատ ասոր մէջ զարմանալի կերպով Կէօթէն կը ներկայացնէ, և կու տայ մեզի այն եզրակացութիւնը՝ որու յանգամ է իր գաղափարական կեանքին մէջ, շրջազարդուած արուեստի ծաղիկներով: Վեր-



Վ.Պ.ՅԱՆԱ ՊԵՏՐԻ:

Թէր կէօթէն էր անհատական կեանքին մէջ. Գառաւ տիեզերական շրջանակին մէջ: Արդէն իր ամբողջ կեանքին ալ գործն է, որու վրայ մտածեր ու խորհեր է միշտ, և տարիներուն հետ փոփոխած, այլա- կերպած, ճշդած: Ինքն իր մէջ նկատելով այդ գործը կարծես միութիւն չունի, եթէ չտեսնենք մէջը կէօթէի հոգին որ անոր միութիւն կու տայ: Դրած է մէջը ինչ որ զօրաւոր կրած է ու բարձր խորհած, իր կեանքին և գիտութեան փորձառութիւնն և համադրութիւնը, իր արուեստին և բա- նաստեղծութեան լոյսը, ու մանաւանդ դրած է փոխ ի փոխ յաջորդութիւնը ցաւերուն և ուրախութեանց, որոնք զիրար կը ծնանին և զիրար կը գլեն ու կը գե- րազանցեն, և հուսկ կ'արժարծեն մահ- կանացուներու սրտին մէջ ամէնէն պինդն և մշտատեւը իղձերէն՝ երջանիկ Ըլլալու փափագն և կամքը, որ ամէնէն վերջ ող- ջակիզուելու, ինքզինք իրեն նուիրելուն մէջ կը կայանայ: Նուիրուելը, զոհուելը կէօթէ իր կեանքին մէջ չըմբռնեց, բնու- թիւնն և արուեստը զայն իրեն գագացու- ցին. այս տեսակետով Գառաւ գուցէ կէօթէն ալ բարձր է:

Կէօթէի կեանքն և արուեստը վերթերէն և Գառաւէն զատ ունեցան ուրիշ ապ- րումներ և փթթումներ ալ. իփիգենի, Ե- ղերերգները, Դասսոն, կէօցը, եւն, սահ- մանափակ չմնաց նեղ շրջանակի մը մէջ. իրաւ է տիրապետելու համար պէտք է չափաւորուիլ, սակայն պէտք է սխալ ըմբռնել այդ սահմանաւորումը. աստիկա ամփոփել կը նշանակէ միակ առարկայի մը վրայ այն բազմերանգ լոյսերը՝ զոր խորհրդածեր ենք: «Ամէնէն նպաստա- ւորուած հանճարը այն է, կ'ըսէ ինք, որ ամէն ինչ կ'իրացնէ և կ'անձնաւորէ, իր բոլոր կարողութիւնները վերանորոգելով և զարգացնելով». այս տեսակետով կըր- նանք զինքը նկատել ամէնէն բախտաւորը. վերջին դարերուն ընդհանրական միտքն է: Ինք ձկտեցաւ ամէն բանի, իր հոգւոյն

ինչպէս և իր գործին մէջ կ'ապրի պատ- մական իրականութիւնը բովանդակ կեան- քին, հոգին բոլոր իրերուն, երաժշտու- թիւնը տիեզերքի բոլոր ձայներուն՝ ներ- դաշնակ և միաձոյլ, շքեղ և հրապուրիչ. և որովհետեւ ձայնը տիեզերական է, հե- տեւաբար և մարդկային է. ձայն մը միայն չկրցաւ զգալ. ամէն ինչ ըմբռնեց, կ'ըսէ Սենթ Պէօֆ, բաց ի քրիստոնեայէն. աս- կից պակասը սիրոյ և ցաւի եղբայրակ- ցութեան հոգեկանութեան:

Կէօթէ ճանչցած է իր և իր գործին մե- ծութիւնը. բայց ինք անհատին չ'ընծայել ամէն ինչ. հաւաքական արտադրութիւն մը կ'ուզէ նկատել նոյն իսկ հանճարի մը գործը. ահա ինչ կ'ըսէ մահէն ամիս մը առաջ. «Լաւ ինչ կայ մեր մէջ, եթէ ոչ զօրութիւնն և իղձը մեզի ձգելու արտաքին աշխարհի միջոցները և զանոնք օգտա- ւորութեան մեր ամենաբարձր նպատակին: Բուն համար: Իրաւունք ունիմ խօսելու իմ անձիս վրայ և համեստօրէն զգացածս յայտնելու: Ճիշտ է որ կեանքիս երկար շրջանին բանքը մ'ըրի որոնց վրայ կրնամ պարծիլ: Սակայն ուղիղ խօսելու համար ինչ ունիմ որ ճշմարտապէս իմս Ըլլայ, բայց եթէ այն ընդունակութիւնն և ճա- շակը որոնցմով կը տեսնեմ և կը լսեմ, կը զանազանեմ և կ'ընտրեմ ու կ'ոգե- տրեմ կեանքով տեսածս և լսածս, ու ճար- տարութեամբ զանոնք կը պատկերացնեմ: Դրածս երբեք միայն իմ իմաստութեանս չեմ վերադրեր, այլ ինձմէ դուրս հազա- րաւոր իրերու և անձերու՝ որոնք անոր նիւթը ինձի հայթայթեցին... Իրապէս յի- մարութիւն է պրպտելը թէ մարդս իրմէ թէ ուրիշներէ առած է, ինքնիրմէ՝ կը գործէ թէ ուրիշներու միջոցաւ. կարեւորն է զօրաւոր կամք մ'ունենալ ինչպէս նաեւ ճարտարութիւն և յարատեւութիւն՝ մը- տադրածը գործադրելու համար. մնացածը անկարելոր է»:

2. ԿԻՐԵՂ ՔԻՊՐԵԱՆ

ՆՄՈՅՇՆԵՐ ԿԵՕԹԷԻ ՔՆԱՐԷՆ

ՆՐԱՏ

Ինչո՞ւ ճամբուդ մէջ միշտ յառաջ կը դիմես.
Բարին քեզի, տե՛ս, մօտ է.
Ընդունայմ տեղ զամի այլու՛ր կը փնտռես.
Չամի բռնել դու սորովէ՛.

ՆՄԱՆ ՆՄԱՆԻ ՀԵՏ

Հողին ծոցէն վաղայարոյց
Դեռարուսիկ ընծիւղ մ'էր մոր
Բաժակներով շրմորհագոծ
Որ ծաղկեցաւ ընդփոյթ աղուոր.

Նկաւ մեղու մ'եւ քնքշօրէն
Բաժակներուն գիրկը մըտած
Ծրծեց բեղուն փոշին ծոցէն. —
Միմեանց համար էին ծընած:

ԱՐԻՈՒԹԻՒՆ

Հեռու քեզմէ ամէն հոգեր,
Ու կոյս, ամոխ դաշտին մէջէն՝
Ուր երբեք հետք մը չէ դրոշմեր
Յանդգնագոյծ իսկ մարդերէն՝
Դու իմքդ հորդէ քեզի շաւիղ.

Ո՛վ իմըս սիրտ, մըխիթարուէ՛,
Թէ մոյմ իսկ մա՛ւրդ շառաչէ,
Ամիկա դեռ խաղաղութիւն չէ.
Նւ թէ երբեք ամ խորտակուի
Քեզ հետ պիտի չըխորտակուի:

ԿԱՆԽԱՀԱՍ ԳԱՐՈՒՆ

Օրեր հեշտագին
Այսպէս շո՛ւտ դարձաւ.
Ինձ կու տա՞յ արփին
Ամտառ ու բլրակի.

Կը յորդի առում,
Ջիւղ են ալիքներն.
Հովիտն է սա մոյմ,
Նո՞յմ և այս մարգեր.

Կապոյտ հովասում,
Նրկիմք և եթեր.
Ընծիմ մէջ խաղում
Ոսկի ձկնիկներ.

Դիւթուած ամտառին
Նրգը թռչնիկին
Նրգն է երկնային
Ծաւալ մէջն օդին:

Կանաչ սաղարթին
Ծոցին՝ մեղուաց պար
Բզգալով ծաղկին
Կը ծրծէ մեկտար.

Դողում մը մեղմիկ
Այիւր է բռնած,
Դիւր և միրճ քաղցրիկ
Հոգւոյն պարզեւած.

Արդ կայտառ քամին
Շունչով զովագին
Ընդփոյթ կը թաղուի
Դալարի ծոցին.

Բայց կրկին իսկոյմ
Սրտիս կը դառնայ.
Մոռա՞յք, օգնութիւն,
Արքշիւ եմ անա՛:

ՊՐՈՍԵԹԵՈՍ¹

Պատէ՛ երկի՛մքըդ ամպացած շոգիով
Ո՛վ Արամազդ, և մամուկի մ'համգումակ
Որ կառափներն ոքոզներու կը ջարդէ՛
Շամթահարէ՛ կաղնիմ ու սէգ բարձունքներ,
Խնայես պիտի, սակայն, հողիս, տընակիս՝
Չոր կերտած չես, խնայես և իմ ակուլիս,
Բոցը որուն քեզ մախամով կը լեցմէ:

Ո՛վ աստուածներ, արեգակին տակ ոչինչ
Կը ճանչնամ ես ձեզմէ թշուառ. Աղօթքէ
Ու զոհերէ ձեր վեհութեան հասած խան
Աղքատիկ է. ու չըքացած իսկ էր ամ
Թէ չըլլային այնտեղ մամուկ, մուրացիկ,
Նղկիւններ որ սին յոյսով կ'օրորուին:

Նրբ ես տըղեկ մ'էի, և դեռ ճշմարտին
Լոյսը մտքիս չէր ճաճանչեր, դէպ՛ երկին
Կը յառէի մոլորական իմ աչուիս,
Որպէս թէ հոմ ակամջ մ'ըլլար լըսելու
Տրտոււնք հոգւոյս, սիրտ մը սրտիս համգումակ,
Ճմռածներուն համար տածել զըթութիւն:

Տիտամներուն դէմ ախոյեան կամգնելու
Արիութիւնն ինձ ո՛վ տըւաւ. ո՛վ փրկեց
Գերութեմէ, մահէ. Դու իմքն ամէն բան
Չըրկի, ո՛վ սիրտ իմ, սրբազան բոցով վառ.
Ու խոնարհիս պիտի 'ծնայի զոհութիւն
Երկմքի մէջ մեջոդին, դո՛ւ մատմուած,
Դու պարմանի կորովալից, հըրաւառ:

Ըզբեզ ինչո՞ւ պաշտեմ, Մի՛թէ թշուառին
Ամոքեցի՞ր ցաւն, և արցունքն եղկելոյն
Սըրբեցի՞ր դու. Ամենագոր յաւիտեան
Նւ ճակտի գիրն յաւերժական, իմ և քու
Միակ տէրեր, չըկերտեցի՞ր զիս իմք մարդ:

Դու և կարծեցի՞ր թէ գուցէ օր մ'ես ատեմ
Կեանքն, և խուսեմ ամապատի ծոցն հեռու,
Ամուրջներուս ծաղիկներուն ես ի զուր
Հասունութեան ըսպասելով ընդերկար:

Նս կը մըմամ այստեղ մարդեր ըստեղծել
Ինձի մըմամ. մըմամ ինձի ցեղ մը որ
Կըրէ, վայլէ, ուրախանայ, արտասուէ,
Նւ ամարգէ քեզ՝ ինչպէս ես կ'ամարգեմ:
Թարգմ. Հ. Ն. ՓէճԻԿՅԱՆ

1. Պրոմէթէոսի վրայ Կէօթէ սկսեւ էր տրամ մը
յօրինել, զոր անկատար թողուց. Այս քնարերգութեան
մէջ խոսացուց զաղափարները զոր անոր մէջ կ'ուզէր
արտայայտել. Տրամէն միայն երկու արարուածները
գրած է: